

51(075)

Ե-34

2090

ԵՐ ԵՐ ՈՒ ՀԱՇԻՎ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ



ՌԻՍՄԱՆ Բ. ՏԱՐԻ

ԿԱԶՄԵՑ Ա. ՇԱՎԱՐՇՅԱՆ

ՊԵՏՀՐԱՏ

1 9 3 1

ՅԵՐԵՎԱՆ

51 (075)

Ե-34

11m.

2 SEP 2006

04 MAY 2010

19 NOV 2011

ԿՅԱՆՔ ՈՒ ՀԱՇԻՎ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ

ՌԻՍՄԱՆ Բ. ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Կազմեց Ա. ՇԱՎԱՐՇՅԱՆ

վերամշակված 2-րդ սպագրություն



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ—ՅԵՐԵՎԱՆ—1931

ԱՌԱՋԱԲԱՆ

Ս. աստիճանի 2-րդ խմբի մաթեմատիկայի դասընթացն ընդգրկում է հարյուրի և հազարի թվանշանը: Բազմապատկման և բաժանման գործողությունը 1000-ի սահմանում, վոր գրքիս վերջին եջերն է բռնում, արտահայտված է ամենապարզ դեպքերով միայն: Փորձը ցույց է տվել, վոր 2-րդ խմբում այդ կարգը լիովին, հաճախ հուշնիսկ մասամբ, անցնել հնարավոր չի լինում: Խնդիրների բովանդակությունը կապվում է կոմպլեքսային թվաճանրին և վերաբերում գլխավորապես գույքակաճ միջավայրին:

Այս աշխատությունը կազմելիս ձեռքի տակ ունեցել եմ և վորոշ չափով ոգտվել ընդունված և ներկայումս գործադրվող ուսումնական համապատասխան դասագրքերից, վորոնց հեղինակներն են՝ Գ. Պոլյակ, Գրաքիանսկի և Կոմբու, Զինշենկո և Եմենով, Վոլկովսկի և այլն:

Ս. Շ.

Մարտի, 1930 թ.

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Յերկրորդ հրատարակության մեջ պահպանված է այս դասագրքի հուշն կառուցվածքը, ինչ վոր առաջին հրատարակության մեջ: Կատարված են վորոշ հավելումներ ու կրճատումներ և նյութերի տեղափոխումներ, հարմարեցնելով նոր ծրագրին: Թեպետ ծրագրում նշված է յուրաքանչյուր կոմպլեքս-թեմա անցնելու ժամանակամիջոցը, սակայն դժվար է դասագրքում ճշտությամբ պահպանել դա, քանի վոր ուսման տարին ամենուրեք միաժամանակ չի ոկավում, աշակերտության սխառաստությունը, ինչպես և ուսուցիչների ձեռնհասությունը խիստ տարբեր է:

Խնդիրների բովանդակությունը, մանավանդ թվական տվյալները հարկավոր է հարմարեցնել տեղական պայմաններին: Անշուշտ, չպետք է բավարարվել միայն այս դասագրքի խնդիրներով, վորոնք միայն նմուշներ են ուսուցչին և աշակերտությանն ողնելու իրական—կենսական խնդիրներ կազմելու համար: Կավագույնն այն խնդիրներն են, վորոնք տալիքներ են ստեղծում դանդաղ չափումների, ռեալ հաշվումների և համապատասխան աշխատանքային պրոցեսների: այդպիսի խնդիրներն էլ յերեխաների համար կլինեն ամենաինտաքցրականը: Դասագրքի խնդիրները մեծ մասամբ յերկու հարցանի յեն: Այդպես են խնդիրները ռուսական համապատասխան բոլոր դասագրքերում: Ի հարկե, կարող են լինել Բ. խմբեր ուժեղ աշակերտներով, վորոնք կարող են լուծել նաև յերեք հարցանի խնդիրներ: այսպիսի դեպքերում ուսուցիչներն իրենք պետք է կազմեն համեմատաբար բարդ խնդիրներ: մեր յելակեար յեղել է մեծամասնության հնարավորությունները:

Հրատարակ. № 1629

Դրանեպ. № 6402 (բ). Տիրած 15,000. Գատվեր № 2311.

Պետերատի տպարան Յերևան

Հաշվային վարժութիւնները, զոր բովանդակութեան մեծ տեղ են բռնում այս գասագրքում, դասավորված են մեթոդական կուռ հաջորդականութեամբ, ընթանալով «հեշտից-դժվարը» սկզբունքով: Անհրաժեշտ են վարժութիւններին մեծ տեղ տալ, սրանցով են ձեռք բերվում հաշվային ունակութիւնները: Սակայն պետք է զգուշանալ, զոր այդ աշխատանքը չտարվի վերացական ու միտքինակ ձևով, այլապես կտուժանա մեքենականութիւնը և ձանձրութիւնը: Դիտողական իրերին, «դիտակալական մատերիալին» հարկավոր է դիմել ամեն առիթով, չերբ նոր ձևի հաշվումներ են կատարելու: Մշակութաների պատրաստութեան այդ աստիճանում հաշվային ունակութիւնների յուրացման գլխավոր նախապայմանը հաշիվների առարկայացումն է կամ կոնկրետացումն է:

Այստեղ բովանդակութեան մեծ տեղ են բռնում մաթեմատիկական խաղերը, վերոնք միանգամայն համապատասխանում են Բ. խմբի յերեխաների հոգեբանութեան: Այս և նման մաթեմատիկական խաղերը կթարմացնեն յերեխաներին և անդգամ կդարձնեն թվական հաշիվների վերացականութեանը:

Ս. Վրիլ, 1931 թ.

Ս. Շ.

ՉՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 100-Ի ՇՐՋԱՆՈՒՄ

ԳՈՒՄԱՐՈՒՄ ՅԵՎ ՀԱՆՈՒՄ

✓ Մեկ-մեկ համարեցե՛ք սեղանի վրա թափած 100 լուցկիները:

✓ Այդ լուցկիները մեկ-մեկ յետ համարեցե՛ք:

✓ Այժմ այդ լուցկիները զույգ-զույգ համարեցե՛ք և հետո զույգ-զույգ յետ համարեցե՛ք:

✓ Յերկու-յերկու և հինգ-հինգ համարեցե՛ք և յետ համարեցե՛ք 100 լուքին, ձողիկները:

✓ Պատի որացուլցի վրա ցույց տվե՛ք սեպտեմբերի 28-ը, հոկտեմբերի 25-ը:

✓ Բաց արե՛ք դասագրքի 36, 53, 64 լերերը:

✓ Տեսրում գծեցե՛ք ներքեի քառակուսիները և գրանց մեջ գրեցե՛ք հաջորդական համարները:

37							44
					73		
	37						

Համընդ զրո գցե՛ք.

$20 + 3 =$	$23 - 3 =$
$40 + 5 =$	$45 - 5 =$
$50 + 7 =$	$57 - 7 =$
$70 + 8 =$	$78 - 8 =$

Հաշվեցե՛ք բանավոր.

$30 + 6 =$
$36 - 6 =$
$50 + 4 =$
$54 - 4 =$

$$30 + x = 36$$

Այս որինակը կարդացե՛ք ախպես. «Ինչ թիվ տվելացնենք (կամ գումարենք) 30-ին, զոր գառնա 36»:

Հաշվեցեք բանաձուր և հետո գրավոր.

$$\begin{array}{ll} 40 + x = 48 & 48 = 8 + x \\ 60 + x = 67 & 67 = 7 + x \\ 70 + x = 73 & 73 = 3 + x \\ 90 + x = 96 & 96 = 6 + x \end{array}$$

✓ Համբիշի վրա գցեք.

$$\begin{array}{ll} 21 + 1 = & 25 - 1 = \\ 32 + 3 = & 35 - 3 = \\ 54 + 4 = & 58 - 4 = \\ 41 + 6 = & 47 - 6 = \end{array}$$

Հաշվեցեք բանաձուր.

$$\begin{array}{llll} 73 + 6 = & 79 - 6 = & 45 + 3 = & 48 - 3 = \\ 44 + 5 = & 49 - 5 = & 55 + 4 = & 59 - 4 = \\ 92 + 6 = & 98 - 6 = & 65 + 2 = & 67 - 2 = \\ 81 + 7 = & 88 - 7 = & 75 + 3 = & 78 - 3 = \end{array}$$

✓ Իմացեք անհայտ թիվը և գրեցեք x-ի փոխարեն.

$$\begin{array}{ll} x - 6 = 31 & x + 2 = 26 \\ x - 5 = 23 & x + 4 = 97 \\ x - 3 = 42 & x + 6 = 38 \\ x - 4 = 35 & x + 8 = 79 \end{array}$$

✓ Մի կողեկաթիվ տնտեսության կազմված է 51 անշառ արն-տեսություններից: Անցյալ ամսին ընդունվեց դարձյալ 4, իսկ այս ամսին՝ 3: Ներկայումս քանի տնտեսություններից է կազմված այդ կոլտնտեսությունը:

✓ Կազմեցեք նման խնդիր ձեր դուռի կոլտնտեսության մասին:

✓ Կոլտնտեսության բանջարանոցում ցանված էր 63 մարդ կաղամբ, դրանից 6-ով ավելի վարունդ, իսկ վերջինից 5 մարդով պակաս՝ պամիդոր: Քանի մարդ պամիդոր էր ցանված:

✓ Կոնսերվի գործարանն ուղարկեցին առաջին անգամ 48 զամբյուղ պամիդոր, իսկ մյուս անգամ՝ 3-ով պակաս: Վերջին ուղարկածից 5 զամբյուղը թթվի պամիդոր էր, քանիսն էր յեփեղու համար:

✓ Կոնսերվի գործարանում պամիդորը լվանալու և մաքրելու աշխատանքներին մասնակցում էր 38 բանվորուհի և գրանից 7-ով պակաս՝ բանվոր: Քանի բանվոր էր մասնակցում այդ աշխատանքին:

Համբիշի վրա գցեք 38, ավելացրեք 2-ը: Քանիս յեղավ:


✓ Հաշվեցեք բանաձուր:

$$\begin{array}{llll} 9 + 1 = & 10 - 1 = & 5 + 5 = & 10 - 5 = \\ 19 + 1 = & 20 - 1 = & 35 + 5 = & 40 - 5 = \\ 29 + 1 = & 30 - 1 = & 65 + 5 = & 70 - 5 = \\ 8 + 2 = & 10 - 2 = & 75 + 5 = & 80 - 5 = \\ 28 + 2 = & 30 - 2 = & 45 + 5 = & 50 - 5 = \\ 48 + 2 = & 50 - 2 = & 95 + 5 = & 100 - 5 = \\ 6 + 4 = & 10 - 4 = & 7 + 3 = & 10 - 3 = \\ 16 + 4 = & 20 - 4 = & 17 + 3 = & 20 - 3 = \\ 26 + 4 = & 30 - 4 = & 37 + 3 = & 40 - 3 = \\ 4 + 6 = & 10 - 6 = & 3 + 7 = & 10 - 7 = \\ 14 + 6 = & 20 - 6 = & 43 + 7 = & 50 - 7 = \\ 94 + 6 = & 100 - 6 = & 63 + 7 = & 70 - 7 = \\ 2 + 8 = & 10 - 8 = & 1 + 9 = & 10 - 9 = \\ 32 + 8 = & 40 - 8 = & 21 + 9 = & 30 - 9 = \end{array}$$

✓ Բանջարանոցի մի թմբից հավաքեցին 65 մեծ և 5 էլ փոքր վարունդ: Դրանցից 8-ը կերան, մնացածը վաճառեցին: Քանի վարունդ վաճառեցին:

✓ Մի կոլտնտեսության բոստաններից 38 սալլ ձմերուկ ու սեխ ուղարկեցին քաղաք՝ կոոպերատիվին հանձնելու, իսկ դրանից 8 սալլով պակաս բաժանվեց տնտեսության անդամներին: Քանի սալլը բաժանվեց կոլտնտեսության անդամներին:

✓ Բ. խմբի աշակերտներն եքսկուրսիա կատարեցին կոնսերվի գործարան: Նախկին որը այնտեղ պատրաստել էին կոնսերվներ 36 պարկ տանձից, դրանից 4 պարկով ավելի՝ դեղձից, իսկ դեղձից 8 պարկով պակաս՝ դեղնաշաղորից: Քանի պարկ դեղձից և դեղնաշաղորից կոնսերվներ էին պատրաստել այդ որը:



Մեծ ողբերը տասնյակներն են, փոքրերը՝ միավորները:
Մյուս մեծ ու փոքր ողբերն արտահայտեցեք թվանշաններով:

Վերջան կլինի.

$$\begin{array}{ll} 45+20= & 38+30= \\ 56+30= & 63+20= \\ 78+20= & 54+40= \\ 27+40= & 49+50= \end{array}$$

Ներքևի մեծ ողերից լերերի միջով տարված են թեք գծեր. դա նշանակում է «3 տասնյակը հանած»:



$$\begin{array}{lll} 45-20= & 56-30=26 & \\ 56-30= & 68-30= & 80+10+6= \\ 78-30= & 83-20= & 30+50+4= \\ 67-40= & 94-40= & 70+10+8= \\ & 99-50= & 40+20+6= \\ \checkmark \text{ Իմացե՛ք անհայտ թիվը և գրեցե՛ք } x\text{-ի փոխարեն} & & \\ x-50=35 & x+50=85 & 65-x=20 \\ x-30=26 & x+30=56 & 46-x=30 \\ x-40=17 & x+40=57 & 76=56+x \\ x-30=42 & x+30=72 & 98=60+x \end{array}$$

ԽԱՂ «50-ՈՎ ԱՎԵԼԻ» ՑԵՎ «50-ՈՎ ՊԱԿԱՍ»

Ներքևի և II ուղղանկյան մեջ լեղած թվերը խառը դասավորությամբ պետք է ասի ուսուցիչը, իսկ աշակերտներն ամեն անգամ արագ ավելացնեն կամ պակասեցնեն 50: Ով ճիշտ ու շուտ պատասխանի, նա լի կտանի խաղը:

26	27	19
25	38	21
44	34	28

+50


72	75	65
95	83	58
79	96	86

-50

✓ Կոլ. տնտեսության խոտը դաշտից գլուղ փոխադրեցին. 30 սալը խոտը տեղավորեցին մի խոտանոցում, 20 սալը՝ մյուսում, մնացածն էլ՝ լերերից խոտանոցում: Քանի՞ սալ տեղավորեցին յերրորդում, լեթե կոլ. տնտեսության ամբողջ խոտը 76 սալ էր.

✓ Նույն տնտեսության արտերը վարում էին: Այդ աշխատանքին I որը մասնակցում էր 34 մարդ, իսկ II որը՝ 40: Աշխատողներից 20-ը դպրոցականներ էին. քանի՞սն էին հասակավոր


Կազմեցե՛ք խնդիրներ կալանախուժյան դաշտային աշխատանքների վերաբերյալ:



Այս նկարում վրձնապարհն է ամենակարճը տնակից մինչև հեռվում լեռնացող ծառերը: Ինչո՞ւ:

✓ 10 մետրանոց պարանով (կամ ուսլետով) չափեցե՛ք ձեր տնից մինչև դպրոցի շենքը լեզած հեռավորությունը սղիղ և վոլորապատույտ ճանապարհներով: Ի՞նչ նկատեցի՛ք:


✓ Չափեցե՛ք I և II գույզ գծերի հեռավորությունը տարբեր տեղերից: Ի՞նչ նկատեցի՛ք: Այո, գուգահեռ գծերը միշտ նույն հեռավորության վրա լին միմյանցից:




✓ Փուլը տվե՛ք դասարանում գուգահեռ գծեր:

✓ Ի՞նչ առարկաների վրա կարող եք զուգահեռ գծերը ցույց տալ:

✓ Ձեր տետրում քանոնով գծեցեք զուգահեռ գծեր 8 սանտիմետր յերկարություն 2 սանտիմետր լայնություն:



Այս ողերն արտահայտեցեք թվանշաններով.



Այս ողերն արտահայտեցեք թվանշաններով:

Հաշվեցեք բանավոր.

$25 + 22 =$	$47 - 22 =$	$58 + 31 =$	$89 + 31 =$
$36 + 23 =$	$59 - 23 =$	$64 + 33 =$	$97 - 33 =$
$45 + 34 =$	$79 - 34 =$	$75 - 23 =$	$98 - 23 =$
$46 + 42 =$	$88 - 42 =$	$87 + 12 =$	$99 - 12 =$

Հաշվեցեք գրավոր.

$44 + 12 - 15 =$	$76 - 41 + 20 =$
$22 + 53 - 14 =$	$68 - 34 + 12 =$
$64 + 31 - 63 =$	$35 - 52 + 35 =$
$16 + 42 - 25 =$	$94 - 62 + 17 =$

✓ Իմացեք անհայտ թիվը և գրեցեք x-ի փոխարեն.


$53 + x = 88$	$x - 35 = 41$	$77 - x = 43$
$64 + x = 88$	$x - 24 = 53$	$88 - x = 54$
$x + 37 = 81$	$x - 45 = 23$	$65 - x = 34$
$x + 46 = 87$	$x - 57 = 32$	$96 - x = 44$

✓ Մի կալից կու. անտեսության II պահեստը բերեցին 33 պարկ ցորեն, մյուս կալից՝ 12-ով ավելի: Դարձյալ վերջին ցորեն կտրելի կլինեք տեղավորել այդ պահեստում, լեթե զրո տարազու. թյունը 89 պարկ եր:


✓ Դյուզից քաղաք ուղարկեցին 96 կողով զանազան պատվ. ներ — խաղող՝ 25, առնձ ու խնձոր՝ 32 կողով, մնացածն էլ՝ դեղձ: Բանի կողով դեղձ եր:

✓ Միջին մեծության մի ձմերուկը վաճառվում եր 32 կող. կով, իսկ նույն մեծության սեխը՝ 4 կողեկով ավելի: Ի՞նչ արժեք միջին մեծության մի սեխն ու ձմերուկը:

Համարիչի վրա գցեք 28, ավելացրեք դրան 12: Բանիս յեղով.



Վերելի ողերը միացրեք. ինչ ստացաք: Արտահայտեցեք թվանշաններով:



Այս կետերի դասավորությունը շարեցեք 27 լորի, հետո 23-ը: Բանիս կլինի:

✓ Վերջին կլինի.

$8 + 2 =$	$7 + 3 =$	$60 - 3 =$
$38 + 2 =$	$57 + 3 =$	$70 - 6 =$
$6 + 4 =$	$4 + 6 =$	$80 - 7 =$
$46 + 4 =$	$64 + 6 =$	$90 - 9 =$
$45 + 15 =$	$60 - 15 =$	$36 + 24 =$
$24 + 16 =$	$40 - 16 =$	$54 + 36 =$
$33 + 17 =$	$50 - 17 =$	$100 - 43 =$
$42 + 18 =$	$60 - 18 =$	$90 - 12 =$

✓ Գրեցեք և հաշվեցեք.

36+44=	80-44=	41+19=	69-19=
53+17=	70-17=	37+43=	80-43=
65+35=	90-25=	18+32=	50-32=
76+24=	100-24=	44+46=	90-46=

✓ Տղիկից կարեցեք 10, 15, 20 և 50 կապեկանոց դրամներ և դրեք ներքևի շերտերի վրա այն դրամարի, վոր նշանակված և այդ շերտի կողքին, քառակուսու մեջ.

65	=	
50	=	
95	=	
70	=	
45	=	
80	=	

✓ Մի ուղղությամբ վերջան են յետ ստացել.

Գումարը	Ի՞նչքան են վճարել	Ի՞նչքան են յետ ստացել
100 կոպեկ	37 կոպեկ	
100 կոպեկ	54 »	
100 կոպեկ	46 »	
100 կոպեկ	65 »	

Կազմեցեք այսպիսի մի աղյուսակ և վերջին ոլորտակում նշանակեցեք անհրաժեշտ թվերը:

Խ Ա Ղ

«Լրացնել 100-ը»

Այս խաղին մասնակցում են յերկու-յերկու աշակերտներ: Նրանցից մեկն առում է 100-ից փոքր մի թիվ, մյուսը պետք է ասի այնպիսի թիվ, զորով լրանա 100 ը. որինակ, յեթե մեկն առի 36, մյուսը պիտի պատասխանի «64» և սրանով լրացնի 100-ը:

Տեսնենքում գծադրեցեք ուղղանկյուններ, ինչպես անում եմ ներքևում Այն ուղղանկյունները բաժանեցեք 2 մասի. ձախ վանդակում գրեցեք այսանդ նշանակված թվերը, իսկ աջ վանդակում այն թիվը, զորով լրանում է 100-ը:

47		66		35		39	
17		63		74		36	
86		77		92		55	
59		26		45		68	

✓ 65 աղջիկներ գնացին բամբակ հավաքելու. I խմբում կար 25, իսկ մնացածը՝ II խմբում, վորի կեսը դպրոցականներ ելին: Քանիսն ելին դպրոցական:


✓ Մի անգամ ել դպրոցը կազմակերպեց բամբակի բերքաբշակ: Մասնակցում ելին 75 աշակերտ և աշակերտուհի — I խմբից՝ 14, II-ից՝ 12, III-ից՝ 24, մնացածն ել՝ IV խմբից: Քանի աշակերտ եր մասնակցում այս խմբից:

✓ 18 լուծկուն ավելացրեք 4-ը:

Նախ քանիսը կավելացնեք 18-ին, վոր դառնա 20: Քանիսն ել պետք է հետո ավելացնել: Ի՞նչքան յեղով:

✓ Նույն ձևով 26 լուցկուն ավելացրեք 8-ը: Վերջան կլինի:

✓ Համբիշի վրա գցեք՝ 15+6, 27+5:



Այս ողերն արտահայտեցեք թվանշաններով: Վերջան կլինի:

✓ Մի տուփի մեջ թողեք միայն 34 լուցիկ. դրանից պետք է հանել 7-ը: Նախ քանիսը կհանեք, վոր մնա 30. քանիսն ել դեռ պետք է հանել: Վերջան կմնա:

$28+6=$	$34-6=$	$45+7=$	$52-7=$
$36+7=$	$43-7=$	$17+7=$	$24-7=$
$47+8=$	$55-8=$	$68+7=$	$75-7=$
$58+9=$	$67-9=$	$85+7=$	$92-7=$

✓ Գրեցեք և հաշվեցեք.

$64+7=$	$71-7=$	$29+6=$	$35-6=$
$59+4=$	$63-4=$	$76+6=$	$82-6=$
$14+9=$	$23-9=$	$85+9=$	$94-9=$
$37+8=$	$45-8=$	$19+8=$	$27-8=$

✓ Հաշվեցեք լուցկիներով՝

»	լարու հատիկներով՝	$64+18=$
»	համրիչով՝	$36+15=$
»	ձողիկներով՝	$48+18=$
		$34+17=$

$24+18=$	$42-18=$	$33+48=$	$81-48=$
$26+16=$	$42-16=$	$65+17=$	$82-17=$
$47+26=$	$73-26=$	$53+29=$	$82-29=$
$37+35=$	$73-35=$	$38+57=$	$85-57=$

✓ Հաշվեցեք գրավոր.

$15+27=$	$47-18=$	$36+37=$
$46+37=$	$74-38=$	$48+15=$
$54+29=$	$65-17=$	$75+16=$
$35+38=$	$51-33=$	$68+29=$





✓ Ներքևի առաջին քառակուսիներում նշանակված թվերը հետզհետե փոքրացրեք.

12-ով՝	96	84						12
15-ով՝	90							15
14-ով՝	98							14
16-ով՝	96							16
18-ով՝	90							18

✓ Հառա թզթից կտրեցեք մի քառակուսի քարա։ Այդ քարաի վրա գրեցեք **18** և շարժելով դա ներքևի դատարկ քառակուսիները վրայով, ամեն անգամ ավելացրեք կողքին նշանակված թիվը։

	+7		+7
	+26		+27
	+38		+56
	+59		+68
	+67		+19

Կտրեցեք 3 ուրիշ քարաեր. մեկի վրա գրեցեք **9**, մյուսին՝ **16**, իսկ յերրորդին՝ **25**։ Այդ քարաերը հերթով ու նույն ձևով շարժեցեք դատարկ քառակուսիների վրա և ավելացրեք կողքի թիվը։ Այժմ կտրեցեք 4 քարա և դրանց վրա գրեցեք **70**, **64**, **82**, **97**։ Այս քարաերը հերթով շարժեցեք ներքևի քառակուսիների վրայով և դրանցից հանեցեք կողքի թիվերը։

	— 25		— 48
	— 29		— 25
	— 46		— 36
	— 57		— 17
	— 18		— 59

✓ Դպրոցը մասնակցեց իրենց գյուղի կոլտնտեսութեան գյուղատնտեսական բերքի տոնին: Այդտեղ IV խմբի աշակերտների թիվը 26 էր, III խմբին՝ 32, իսկ II և I խմբերին՝ 27-ով պակաս IV և III խմբերի մասնակցողներից: Հնդկամենը քանի՞ աշակերտ մասնակցեց բերքի տոնին:

✓ Աշակերտներից 45-ը բանջարանոցներից և այգիներից մթերքներ ելին տեղափոխում, 28-ը պլակատներ, լոգուններ, համարներ գրում, մնացածն էլ զարդարում ցուցահանդեսի վալը: Քանի՞սն էին զբաղված զարդարանքների գործով:

✓ Հարևան կոլտնտեսությունից այդտեղ յեկան 14, իսկ քաղաքի շէֆ-ի մնալից՝ 9 ներկայացուցիչներ: Յեթե բոլոր ներկայացուցիչների թիվը հանենք բերքի տոնին մասնակցող աշակերտության անդամների թիվը, կստանանք մեր գյուղի կոլտնտեսության անդամների թիվը: Քանի՞ անդամ ունի այդ տնտեսությունը:

ԺԱՄԱՆԱԿԸ ՎՈՐՈՇԵԼԸ

Տարին 12 ամիս է:

Ամիսը 30 օր է:


Ցերեկն ու գիշերը մի քիվ օր է:

Որը 24 ժամ է:

Ժամը 60 րոպե չէ:


Րոպեն 60 վայրկյան է:

✓ Ժամանակը չափում են ժամացույցով: Նայեցեք այս նկարներին և սովորեցեք ժամանակը վորոշել ժամացույցի սլաքների դիրքով:



12-ից քառորդ անց: Ցերկուս և կես: 8-ից քառորդ պակաս:

✓ Հաստ թղթից պատրաստեցեք ցիֆերլատ. նշանակեցեք թվանշանները և 2 շարժական սլաքներ: Ժամի քանի՞սը կլինի, յեթե սլաքների դիրքը լինի այսպես:



✓ Քանի՞ րոպե կանցնի, յեթե մեծ սլաքը մի քիվ պտույտ կառարի:


✓ Սլաքների գիրքն ինչպես կլինի ժամը 1-ին, 4-ին, 7-ին, 12-ին:

✓ Սլաքների գիրքն ինչպես կլինի, յերբ 2-ից քառորդ անց և կամ $2\frac{1}{2}$ ժամն է:

Պատճ. և հավել.— 3.



✓ Առավոտները լերը եք վերկենում:



✓ Յերբ ես սկսում ձեր գոտերը և լերը վերջանում:

ժամի քանիսին եք ճաշում:


✓ Յերեկոյան ժամի քանիսին եօ պառկում քնելու:

✓ Քանի ժամ եք քնում:

Ջերմութունը չափում են ջերմաչափով: Ջերմաչափը, ինչպես տեսնում եք նկարում, բաժանված է աստիճանների: Օ աստիճանից ներքև յեղածները պրտության աստիճաններ են, յերբ ջուրը սառչում է, իսկ 0-ից վերև՝ ջերմության:


Աստիճանը գրում են ° նշանով, որինակ, 12°, 15°, Յրտության աստիճաններին արտահայտելիս թվանշանի առջև դրվում է «—» նշանը, որինակ, —8°, —10°:

✓ Չափեցեք ջերմաստիճանն առավոտյան ժամը 8 ին, կեսորին՝ ժամը 2 $\frac{1}{2}$ -ին և յերեկոյան ժամը 7-ին: Արտահայտեցեք դա այսպիսի ուղղաձիգ գծերով:



Ինչ յերկարության կլինեն գծերը, յեթե ջերմութունն առավոտյան ինի 8°, կեսորին՝ 10°, իսկ յերեկոյան՝ 9°: Ջերմության ամեն մի աստիճանն արտահայտեցեք մի վանդակով:

✓ Ծալրը Լենինականից նամակ գրեց վորդուն Յերևան: Այդ նամակի ծրարի վրա դրոշմված 2 կնիքներից վորոշեցեք:



1. Յերբ ե նամակը պոստին հանձնվել:

2. Յերբ ե նամակը հասել Յերևան:

3. Քանի որում է հասել:

✓ Հեռագիր ուղարկելիս ամեն մի բառին վճարում են 7 կոպեկ, բացի այդ յուրաքանչյուր հեռագրից իրրև պոստի ծախս առնում են 15 կոպեկ: Մի հեռագրի համար ծախս յեղավ 87 կոպեկ: Հաշվեցեք:

1) 1 ուրբուլց դուրս գալով հեռագրի ծախսը, վորքան պետք է վերադարձնել:

2) 87 կոպեկից միայն հեռագրի բառերի համար վորքան է վճարված:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

Հոկտեմբերյան հեղափոխության տոնին դասարանը զարդարելու համար գտեցին:

	Կարմիր թուղթ	Կանաչ թուղթ	Կապույտ թուղթ	Ընդա- մենը
I խմբի համար	24 թերթ	14 թերթ	9 թերթ	
II » »	27 »	12 »	7 »	
III » »	24 »	19 »	12 »	
IV » »	23 »	18 »	16 »	

Վերջին սլունյակում գրեցեք ամեն մի խմբի ստացած թղթի քանակը:

Եթե թերթ գունավոր թղթին վճարեցին 8 կոպեկ.

» » հաստ » » 12 »

1 սրվակ սոսնրին » » 25 »

1 մետր կարմիր կտորին » » x »

Այդ բոլորին վճարեցին 93 կոպեկ: Վորքան վճարեցին 1 մետր կարմիր կտորին:

✓ Դրեցեք, գույք լինչ գնեցիք տոնի համար և վճարեցեք:

✓ Շքերթին մասնակցում ելին նաև աշակերտները:

I խմբից յեկել ելին 16 տղա և 8 աղջիկ

II » » » 18 » 13 »

III » » » 17 » 16 »

IV » » » 18 » 19 »

Քանի աշակերտ և աշակերտուհի չեք մասնակցում շքերթին:

✓ Տոնակատարութիւնը սկսվեց առավոտյան ժամը 10-ին և վերջացավ 4 ժամից հետո: Ժամի բանիսին վերջացավ հանդեսը:

ՓԱԿԱԳԾՈՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

$$12 + (23 + 29) \quad 56 - (47 - 34)$$

$$32 + (14 + 38) \quad 68 - (56 - 28)$$

$$25 + (34 + 17) \quad 77 - (61 - 13)$$

$$41 + (19 + 18) \quad 94 - (72 - 53)$$


$$33 + (23 - 15) \quad 66 - (35 + 24)$$

$$24 + (36 - 14) \quad 83 - (47 + 16)$$


$$46 + (28 - 17) \quad 91 - (26 + 18)$$

$$52 + (54 - 31) \quad 75 - (44 + 28)$$

✓ Վերցրեք 2 լուցիկ և մի ծալքը կպցնելով, ավել գրանց ալյուխի գիրք:



Լուցիկների բաց ծալքերը մոտեցրեք և հեռացրեք. կատանաք ալյուխի անկյուններ:




✓ Յերկու մատիաներից կազմեցեք անկյուն:

✓ Յերկու քանոններից կազմեցեք անկյուն:

✓ Դրատախտակի վրա դեղեցեք անկյուն:

✓ Տետրերում դեղեցեք 3 անկյուն այս ձևերով և գրանց տակ գրեցեք:



Ուղիղ անկյուն

Սուր անկյուն



Բութ անկյուն


✓ Խնչալիսի անկյուններ ունեն օեղանը, գրատախտակը, պահարանը, գիրքը:

✓ Ցույց տվեք և հիշեցեք առարկաներ սուր անկյունով:

✓ Ցույց տվեք և հիշեցեք առարկաներ բութ անկյունով:


✓ 3 լուցիկների ծալքերն իրար միացրեք այս ձևով՝ Δ : Քանի անկյուն կազմվեց: 3 անկյուն ունենալու պատճառով այս ձևը կոչվում է յեռանկյուն:

✓ 2 լուցկուց և դրանից ավելի լերկար մի ձողիկից կազմեցեք մի յեռանկյուն, վորի անկյուններից մեկը լինի ուղիղ, այսպես.



Սա ուղղանկյուն յեռանկյուն է:

✓ 3 լուցկուց կազմեցեք մի յեռանկյուն, վորի բոլոր անկյունները լինեն սուր, այսպես.



Սա սուրանկյուն յեռանկյուն է:

✓ 2 լուցկուց և դրանից ավելի լերկար մի ձողիկից կազմեցեք մի ափսիսի յեռանկյուն, վորի անկյուններից մեկը լինի բութ, այսպես.



Սա բութանկյուն յեռանկյուն է:

✓ 2եր տետրում գծագրեցեք մի ուղղանկյուն, մի սուրանկյուն և մի բութանկյուն յեռանկյուն:

✓ Ծալեցեք մի քառակուսի թերթ թուղթը հակադիր անկյուններով: Ի՞նչ ձև ստացվեց: Կրկին ծալեցեք, այժմ ի՞նչ ձև ստացվեց:


✓ Վերցրեք 4 լուցկի և կազմեցեք քառակուսի:

Այդ լուցկիները քառակուսու կողմերը կլինեն: Քառակուսու կողմերն իրար հավասար են, թե՛ վոչ. չափեցեք:

✓ Քանի՞ անկյուն ունի քառակուսին: Ի՞նչպիսի անկյուններ են: Հավասար են իրար, թե՛ վոչ. չափեցեք:

✓ Թղթից պատրաստեցեք մի քառակուսի. ծալելով կիսեցեք: Ի՞նչ ձև ստացվեց:

Գծեցեք մի ուղղանկյուն, այսպես.



Քանի՞ անկյուն ունի ուղղանկյունը և ի՞նչպիսի:

Հավասար են այդ անկյունները, թե՛ վոչ:

Չափեցեք կողմերը. վոր կողմերն են իրար հավասար:

Ինչո՞վ են նման քառակուսին և ուղղանկյունը:

Ինչո՞վ են տարբերվում քառակուսին և ուղղանկյունը:

Ի՞նչ քառակուսաձև իրեր կան դասարանում, բակում, փողոցում:

Ի՞նչ ուղղանկյունաձև իրեր կան դասարանում, տանը, գաշտում:

✓ Առեք մի թերթ տետրակի թուղթ և ծալեցեք այնպես, վոր ստացվի քառակուսի, զանազան ձևի յեռանկյուններ:

✓ Գումարեցեք ներքևի քառակուսիների մեջ յեղած թվերն աղած ուղղությամբ: Ի՞նչ եք նկատում:

1	14	15	4
12	7	6	9
8	11	10	5
13	2	3	16

✓ II խումբ եքսկուրսիա կատարեց այգին: Անտեղից բերեցին տերևներ՝ տանձենու՝ 12, թթենու՝ 3-ով պակաս, ծիրանի՝ 8, իսկ խնձորենու և ընկուզենու՝ 17: Քանի տերև բերեցին:

✓ Դպրոցական թանգարանի համար ծառերից կեղև պահելիս նկատեցին դրանց տակ թագնաված միջատներ. մի կեղևի տակ 17, մյուսին՝ 18, իսկ յերրորդին՝ ամբողջ միջատ, վորջան 1 և II ծառերի կեղևի տակ եյին: Քանի միջատ համարեցին:

✓ Կոլեկոփ տնտեսության այգիներում խաղողի վաղերը թաղելու համար II որն աշխատեց 36 բանվոր, III որն ել՝ նույնքան, իսկ I որը՝ III որվա բանվորներից 17-ով պակաս: Քանի բանվոր թաղեց վաղերը:

✓ Բամբակի բերքի վերջին հավաքին աշխատանքի անցան 93 մարդ, վորից տղամարդ՝ 28, կին ու աղջիկ՝ 37, մնացածն ել՝ յերեխաներ: Տղամարդիկ եյին շատ, թե՛ յերեխաները:

✓ Ճանապարհի մի կողմում 81 արտերից ցանված եյին 56-ը, վարած, բայց չցանած՝ 18-ը, միջանիսն ել անմշակ մնացած: Քանի արա եր անմշակ մնացել:

✓ Հաշվեցեք բանավոր.

$63 + (4 \times 5) =$	$63 - (4 \times 5) =$
$38 + (7 \times 2) =$	$38 - (7 \times 2) =$
$45 + (10 \times 3) =$	$45 - (10 \times 3) =$
$56 + (6 \times 3) =$	$56 - (6 \times 3) =$
$53 + (3 \times 5) =$	$68 - (5 \times 3) =$
$72 + (2 \times 6) =$	$79 - (20 \times 2) =$
$47 + (4 \times 3) =$	$84 - (9 \times 2) =$
$66 + (3 \times 6) =$	$92 - (30 \times 2) =$

✓ Հաշվեցեք գրավոր.

$(10 \times 3) + 28 =$	$(20 \times 4) - 28 =$
$(4 \times 10) + 16 =$	$(30 \times 3) - 37 =$
$(3 \times 20) + 36 =$	$(20 \times 5) - 46 =$
$(2 \times 9) + 25 =$	$(40 \times 2) - 73 =$

✓ Հաշվեցեք բանավոր.

$55 + (40 : 2) =$	$55 - (40 : 2) =$
$64 + (60 : 2) =$	$64 - (60 : 2) =$
$48 + (18 : 2) =$	$48 - (18 : 2) =$
$74 + (18 : 3) =$	$74 - (18 : 3) =$

✓ Հաշվեցեք և գրեցեք.

$(60 : 6) + 19 =$	$(60 : 3) - 8 =$
$(80 : 8) + 27 =$	$(80 : 2) - 13 =$
$(90 : 10) + 35 =$	$(90 : 3) - 17 =$
$(90 : 10) + 46 =$	$(100 : 5) - 14 =$

ԼՈՏՈՅԻ ԽԱՂ

Ներքևի օրինակով բայց ավելի մեծ գիրքով հաստ թղթից պատրաստեցեք ջարտեր և բառակուսիներ.

45—18	60—43	65—19	46+27	35+28
31—12	100—43	78—69	80—64	58+34
29+28	71—59	53+47	78+9	65+13

53	92	27	82	16
63	19	17	13	16
57	100	87	73	19

Վերցրեք յուրաքանչյուրդ 3-ական ջարա, մեկ-մեկ հանեցեք քառակուսիները և խաղացե՛ք լոտո:

✓ Դյուղում դպրոցական շենք եյին կառուցում, վորին մասնակցում եյին նաև աշակերտները. այդ օրը նրանց թիվը 48 եր, իսկ նույն շենքի վրա աշխատող գյուղացիներն՝ 15-ով պակաս աշակերտներից: Այդ օրը քանի մարդ եր աշխատում շենքի վրա, յեթե հաշվենք նաև 2 վարպետներին և նրանց 4 սղնականներին:

✓ Այդ շենքը կառուցող 81 աշխատավորներից 26-ը ջար եր կրում, 8-ը ցեխ հասցնում, մյուսներն ել ուրիշ աշխատանքներ կատարում: Քանիսն եյին դրանք:

✓ Քաղաքում մի նոր բաղնիս շինեցին, վորի համարների թիվը 48 եր, ընդհանուր լողարանների թիվը՝ 4, 12 սենյակ ել գրասենյակավուն և ուլ կարիքների համար: Քանի կառուցեց եր բաղնիսը:

ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄ ՅԵՎ ԲԱԺԱՆՈՒՄ


Հաշվեցեք.

$$\begin{array}{ll} 10 \times 2 = & 10 \times 7 = \\ 10 \times 3 = & 10 \times 8 = \\ 10 \times 4 = & 10 \times 9 = \\ 10 \times 5 = & 10 \times 10 = \\ 10 \times 6 = & \end{array}$$

✓ Սեղանի վրա լցրած 100 լոբին վերածեցեք հնգյակների: Քանի հնգյակ լեղավ:

✓ Մի առփից հանեցեք լուցկիները և դասավորեցեք հնգյակներով: Քանի լոբի հնգյակ լեղավ:

✓ Գծագրեցեք մի ուղղանկյուն, վերածելով դա 4 շարքի և ամեն մի շարքը՝ 5 քառակուսու, այսպես.



✓ Քանի քառակուսի կա այս ուղղանկյան ամեն մի շարքում:

✓ Ընդամենը քանի հնգյակ է:

✓ Ինչպես կգրեք դա: Այո, $5 + 5 + 5 + 5 = 20$.

Դա կարելի չէ ավելի կարճ գրել, այսպես. $5 \times 4 = 20$



✓ Քանի անգամ հինգ կոպեկանեց է նկարած այստեղ:

✓ Ինչպես կարաճախեք դա կարճ ձևով:

✓ Ներքևի որինակներն արտահայտեցեք կրճատ ձևով.

5 կամ $5 \times 1 =$

$5 + 5$ » $5 \times 2 =$

$5 + 5 + 5$ » $5 \times 3 =$

$5 + 5 + 5 + 5$ »

$5 + 5 + 5 + 5 + 5$ »

$5 + 5 + 5 + 5 + 5 + 5$ »

$5 + 5 + 5 + 5 + 5 + 5 + 5$ »

$5 + 5 + 5 + 5 + 5 + 5 + 5 + 5$ »

$5 + 5 + 5 + 5 + 5 + 5 + 5 + 5 + 5$ »

$5 + 5 + 5 + 5 + 5 + 5 + 5 + 5 + 5 + 5$ »

✓ Հաշվեցեք բանավոր, հետո գրեցեք.

$5 \times 2 =$ $5 \times 5 =$ $5 \times 9 =$

$5 \times 4 =$ $5 \times 7 =$ $5 \times 7 =$

$5 \times 6 =$ $5 \times 9 =$ $5 \times 8 =$

$5 \times 3 =$ $5 \times 8 =$ $5 \times 10 =$

✓ 20 կոպեկը հավասարապես բաժանեցեք 10 մարդու. Ինչքան կհասնի յուրաքանչյուրին:

Հաշվեցեք բանավոր.

$30 : 10 =$ $70 : 10 =$

$40 : 10 =$ $80 : 10 =$

$50 : 10 =$ $90 : 10 =$

$60 : 10 =$ $100 : 10 =$

✓ 15 կոպեկ հավասարապես բաժանեցեք 5-ին. Ինչքան կստանա յուրաքանչյուրը:

✓ Համրիչի հատերից 20-ը հավասար բաժանեցեք 5 մասի: Վերջան կլինի ամեն մի մասում:

✓ Հաշվեցեք բանավոր.


$5 : 5 =$ $30 : 5 =$

$10 : 5 =$ $35 : 5 =$

$15 : 5 =$ $40 : 5 =$

$20 : 5 =$ $45 : 5 =$

$25 : 5 =$ $50 : 5 =$



✓ Գրեցե՛ք և հաշվեցե՛ք.

$20 : 5 =$	$40 : 5 =$
$30 : 5 =$	$25 : 5 =$
$5 : 5 =$	$10 : 5 =$
$35 : 5 =$	$45 : 5 =$
$50 : 5 =$	$15 : 5 =$

✓ 5 բաղկը 1 կապ է, իսկ

30 » քանի՞ կապ է.
45 » »
15 » »
35 » »

✓ Ձորս-չորս համարեցե՛ք մինչև 100:

✓ Կորիզները 4-4 շարեր սեղանի վրա 3 անգամ: Քանի՞ կորիզ լեղավ:

✓ Գծագրեցե՛ք 4 վանդակ, այսպես,



Այսպես իրար տակ գծագրեցե՛ք 6 անգամ: Քանի՞ շարք լեղավ ընդամենը քանի՞ վանդակ գծագրեցիք: Ի՞նչպես կգրեք այդ:

✓ Կարճ ձևով ի՞նչպես կգրեք հետևյալ որինակները:

4 կամ $4 \times 1 =$

$4 + 4$ »
 $4 + 4 + 4$ »
 $4 + 4 + 4 + 4$ »
 $4 + 4 + 4 + 4 + 4$ »
 $4 + 4 + 4 + 4 + 4 + 4$ »
 $4 + 4 + 4 + 4 + 4 + 4 + 4$ »
 $4 + 4 + 4 + 4 + 4 + 4 + 4 + 4$ »
 $4 + 4 + 4 + 4 + 4 + 4 + 4 + 4 + 4$ »


✓ Գրեցե՛ք լերկար ձևով.

4×2 կամ
 4×4 »
 4×6 »
 4×3 »

✓ Հաշվեցե՛ք բանավար.

$4 \times 2 =$	$4 \times 7 =$	$4 \times 6 =$
$4 \times 5 =$	$4 \times 4 =$	$4 \times 9 =$
$4 \times 3 =$	$4 \times 8 =$	$4 \times 10 =$

✓ Գծագրեցե՛ք մի քառակուսի և նրա մեջ 4×4 վանդակ:




✓ Կիսեցե՛ք 20 կոպեկը. ստացած թիվն ել կիսեցե՛ք: Քանի՞ մաս լեղավ: Քանի՞ կոպեկ է ամեն մի մասը:

✓ 24 գրչածայրը բաժանեցե՛ք 4 հավասար մասի. նախ կիսեցե՛ք 24-ը, ապա ստացած թիվը նորից կիսեցե՛ք: Վարքան կլինի:

ԿԵՍԻ ՅԵՎ ԲԱՌՈՐԴԻ ԽԱՂ

Ուսուցիչը տալիս է մի թվի անուն, իսկ ուղակերտները պետք է ասեն կամ գրեն այդ թվի կեսը և քառորդը:

60 =	30	30	15	15	15	15
30 =						
50 =						
72 =						
36 =						



✓ Իմացեք անհայտ թիվը.

$$\begin{aligned} 4 \times x &= 24 \\ 4 \times x &= 28 \\ 4 \times x &= 36 \\ 4 \times x &= 32 \end{aligned}$$

✓ Տեսրու՞մ կարգով գրեցեք 1-ից մինչև 40 և գի՛ծ քաշեցեք այն թվերի տակ, վորոնք հավասար բաժանվում են 4-ի վրա:

✓ Հետևյալ որինակները գրեցեք կարճ ձևով.

$$\begin{aligned} 8 \text{ կամ } 8 \times 1 &= \\ 8 + 8 \text{ » } 8 \times 2 &= \\ 8 + 8 + 8 \text{ » } \\ 8 + 8 + 8 + 8 \text{ » } \\ 8 + 8 + 8 + 8 + 8 \text{ » } \\ 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 \text{ » } \\ 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 \text{ » } \\ 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 \text{ » } \\ 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 \text{ » } \\ 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 + 8 \text{ » } \end{aligned}$$

✓ Հաշվեցեք բանավոր.


$8 \times 1 =$	$8 \times 6 =$	$8 \times 3 =$
$8 \times 2 =$	$8 \times 7 =$	$8 \times 6 =$
$8 \times 3 =$	$8 \times 8 =$	$8 \times 9 =$
$8 \times 4 =$	$8 \times 9 =$	$8 \times 5 =$
$8 \times 5 =$	$8 \times 10 =$	$8 \times 7 =$

✓ Գրեցեք և հաշվեցեք.

$(8 \times 4) + 17 =$	$82 - (8 \times 3) =$
$(8 \times 6) + 25 =$	$64 - (8 \times 4) =$
$(8 \times 5) + 37 =$	$75 - (8 \times 6) =$
$(8 \times 9) - 45 =$	$95 - (8 \times 8) =$

ԱՆԽՈՍ ԽԱՂ

Ուսուցիչը գրատախտակի վրա գծադրում է մի շրջան հետևյալ թվական որինակներով.



Դրանից հետո նա աշակերտներին մեկ-մեկ կանչում է գրատախտակի մոտ և լուռ ցույց տալիս այն որինակը, վոր պետք է լուծեն նրանք. Աշակերտը լուռ գրում է իրեն առաջարկված որինակի պատասխանը և հեռանում: Յեթե վորևե մեկի գրած պատասխանը սխալ է, ուսուցիչը ջնջում է և լուռ կանչում մյուսին: Այդ խաղի ժամանակ դասարանում պետք է կատարյալ լուռ լինեն:

✓ Մի մատիտն արժե 7 կոպեկ. ի՞նչ արժե 6-ը.

Մի գրչակոթն արժե 8 կոպեկ ի՞նչ արժե 8-ը.



Մի ռետինն արժե 8 կոպեկ. ի՞նչ արժե 7-ը.

Մի թերթ սովաբաթուղթն արժե 8 կոպեկ. ի՞նչ արժե 9-ը.

✓ Հաշվեցեք.

$5 \times 3 =$	$2 \times 7 =$	$4 \times 5 =$	$8 \times 3 =$
$5 \times 6 =$	$2 \times 5 =$	$4 \times 7 =$	$8 \times 5 =$
$5 \times 8 =$	$2 \times 8 =$	$4 \times 9 =$	$8 \times 8 =$
$5 \times 9 =$	$2 \times 9 =$	$4 \times 8 =$	$8 \times 7 =$

✓ Ուղղանկյուն թուղթը կամ շրջանը ծախելով կիսեցեք. այդ ծախածը կրկին ծախեցեք, յերրորդ անգամ նույնպես: Այժմ բաց ացեք թուղթը. քանի մասի լե բաժանվել:



✓ Համեմատեցեք այս 3 ուղղանկյունները կամ շրջանները. փոքի մասերն են ամենամեծը:

I-ի մի հատվածը II-ի քանի՞ հատվածին է հավասար:

II-ի » » III-ի » » »

III-ի մի հատվածը քանի՞ անգամ փոքր է II-ի մի հատվածից:

III-ի մի հատվածն ամբողջ ուղղանկյան վրա մասն է:

Մեկ ութերորդականը գրվում է այսպես. $\frac{1}{8}$:

✓ Ութերորդական մասերի բաժանեցեք խնձորը: Քանի ութերորդական մասեր միացնենք, վոր դառնա խնձորի $\frac{1}{4}$ -ը

✓ Վրբեկ կլոր առարկայի միջոցով գծագրեցեք 3 շրջան: Այդ շրջաններից մեկը կիսեցեք, մյուսը բաժանեցեք 4, իսկ յերրորդն

եղ՝ 8 հավասար մասերի: Այդ շրջանների մասերին նախելով խմացեք, ինչպիսի մասերի յե հավասար:

$$\begin{array}{l|l} 1 = \frac{1}{2} + \frac{1}{2} & \frac{1}{2} = \frac{1}{4} + \frac{1}{4} \\ 1 = \frac{1}{4} + \frac{1}{4} + \frac{1}{4} + \frac{1}{4} & \frac{1}{4} = \frac{1}{8} + \frac{1}{8} + \frac{1}{8} + \frac{1}{8} \\ 1 = \frac{1}{8} + \frac{1}{8} + \frac{1}{8} + \frac{1}{8} + \frac{1}{8} + \frac{1}{8} + \frac{1}{8} + \frac{1}{8} & \frac{1}{8} = \frac{1}{16} + \frac{1}{16} + \frac{1}{16} + \frac{1}{16} + \frac{1}{16} + \frac{1}{16} + \frac{1}{16} + \frac{1}{16} \end{array}$$

✓ Վերջան կլինի՝

$$20 \cdot \frac{1}{4} = 5$$

$$24 \cdot \frac{1}{4} = 6$$


$$24 \cdot \frac{1}{8} = 3$$

$$32 \cdot \frac{1}{8} = 4$$

✓ 16 տետրը հավասարապես բաժանեցեք 8 աշակերտի: Նախ 16-ը կիսեցեք. ստացած թիվը կրկին կիսեցեք. քանի մաս յեղավ: Այդ մասերը դարձյալ կիսեցեք. քանի մաս յեղավ: Այդ մասերից յուրաքանչյուրն ամբողջի վրա մասն է:

16-ի $\frac{1}{8}$ մասը վրձան կլինի:

Նույն ձևով, ինչպես 16-ը, 24-ը բաժանեցեք 8-ի:



✓ Հաշվեցեք բանավոր և գրավոր.

$$\begin{array}{ll} 40 : 8 = & 56 : 8 = \\ 48 : 8 = & 72 : 8 = \\ 32 : 8 = & 24 : 8 = \\ 68 : 8 = & 80 : 8 = \end{array}$$

Գյտեք ու հաշվեք—8.

Հաշվեցեք.

$$\begin{array}{lll} 8 \times x = 72 & 8 \times x = 40 & 49 : x = 8 \\ 8 \times x = 32 & 8 \times x = 80 & 72 : x = 8 \\ 8 \times x = 56 & 8 \times x = 24 & 48 : x = 8 \\ 8 \times x = 48 & 8 \times x = 64 & 56 : x = 8 \end{array}$$

✓ Դպրոցում վերջին մի քանի ուրը որական նախաճաշում ելին 93 աշակերտ, վրից 25 չքավորները՝ ձրի վճարով նախաճաշողներին 39 տղաներ ելին. քանիսն ելին աղջիկ:

✓ Մի կտոր հացն ու պանիրը թելով միասին դպրոցում արժե 8 կոպեկ: Նույն նախաճաշը դրսում մասնավորի մոտ արժե 48 կոպեկ: Դպրոցում նախաճաշը քանի անգամ եփան ե զրաի համեմատությամբ:

Տեղեկացեք ձեր դպրոցում նախաճաշողներին թվի մասին և կազմեցեք խնդիր:

✓ Նախաճաշին լերբեմն ել մի-մի բաժակ կաթ եր տրվում աշակերտներին: Քանի լիտր կաթը կբավարարի 90 լերբխալին, լիթե լիտրը 5 թելի բաժակ ե:

✓ Չափեցեք մի լիտր ջուրը, իսկապես դա 5 թելի բաժակ ե:

✓ Չափեցեք, թե 3 շիշ ջուրը քանի լիտր ե:

✓ Խոնավ նկուղում ապրող ընտանիքը բնակարանի վարձ տալու և վճարում եր 48 ուլբի, իսկ զրա վերևում ապրողը 84 ուլբի: Նկուղում ապրողները խոնավութունից առաջացած հիվանդութիւնները բժշկելու համար տարեկան միջին հաշվով ծախսում ելին 50 ու: Հաշվեցեք, ում բնակարանն եր ավելի եփան նստում նկուղում, թե զրա վերևում ապրող ընտանիքի:

✓ II խմբի լերբխաններից անկողին ունեն 32-ը, իսկ զրա $\frac{1}{4}$ -ը զուրկ ե անկողնից, իմացեք ալ խմբի յերբխանների թիվը:

✓ III խմբի 40 աշակերտներից 8-ն ունի առանձին լերեսորբիշ, իսկ մյուսներն ոգովում են բնահանուր լերեսորբից: Առանձին լերեսորբիշ ունեցողները քանի անգամ քիշ են չունեցողներին:

✓ I խմբից թաշկինակ չեն գործածում 8 լ. իսկ 4 անգամ ավելին գործածում ե: Սրանցից 16-ն աղջիկներ են: Քանի՞ն են տղա:

✓ Տարվա սկզբին IV խմբի 41 աշակերտներից սանր գործածում ելին 8 աշակերտ, իսկ տարվա վերջին՝ 8 անգամ ավելի: Տարվա վերջին նրանցից քանիսը չվարժեց սանրի գործածության:

3-3 համարեցեք մինչև 99.

✓ Ներքեի որինակները գրեցեք կարճ ձևով:

$$\begin{array}{ll} 3 \text{ կամ } 3 \times 1 = & \\ 3 + 3 \text{ » } 3 \times 2 = & \\ 3 + 3 + 3 \text{ » } 3 \times 3 = & \\ 3 + 3 + 3 - 3 \text{ » } & \\ 3 + 3 + 3 + 3 \text{ » } & \\ 3 + 3 + 3 + 3 + 3 \text{ » } & \\ 3 + 3 + 3 + 3 + 3 + 3 \text{ » } & \\ 3 + 3 + 3 + 3 + 3 + 3 + 3 \text{ » } & \\ 3 + 3 + 3 + 3 + 3 + 3 + 3 + 3 \text{ » } & \\ 3 + 3 + 3 + 3 + 3 + 3 + 3 + 3 + 3 \text{ » } & \end{array}$$

✓ Վերբան կլիի:

$$\begin{array}{ll} 3 \times 2 = & 3 \times 6 = \\ 3 \times 3 = & 3 \times 7 = \\ 3 \times 4 = & 3 \times 8 = \\ 3 \times 5 = & 3 \times 9 = \\ & 3 \times 10 = \end{array}$$

✓ Հաշվեցեք և գրեցեք.

$$\begin{array}{ll} (3 \times 5) + 36 = & 73 - (3 \times 6) = \\ (3 \times 8) + 18 = & 80 - (3 \times 7) = \\ (3 \times 6) + 45 = & 81 - (3 \times 9) = \\ (3 \times 9) + 27 = & 92 - (3 \times 8) = \end{array}$$

✓ Գծագրեցեք 12 վանդակ և բաժանեցեք 3 մասի, այսպես.



Սկացրածն այս բառակուսիներին վերբորող մասն ե:

Մեկ յերբորդականը գրվում ե այսպես. $\frac{1}{3}$:

5 կոպեկը 15-ի վեր մասն ե:

Անջատեցեք 18 լուցկու $\frac{1}{3}$:


Հաշվեցեք բանավոր և գրավոր.

$$\begin{aligned} 18 : 3 &= \\ 27 : 3 &= \\ 15 : 3 &= \\ 24 : 3 &= \\ 12 : 3 &= \\ 21 : 3 &= \end{aligned}$$

$$\begin{aligned} 51 + (24 : 3) &= & 9 - (15 : 3) &= \\ 58 + (21 : 3) &= & 84 - (21 : 3) &= \\ 73 + (27 : 3) &= & 81 - (18 : 3) &= \\ 65 + (18 : 3) &= & 93 - (24 : 3) &= \end{aligned}$$


Հաշվեցեք բանավոր.

$$\begin{aligned} 3 \times x &= 27 \\ 3 \times x &= 18 \\ 4 \times x &= 24 \\ 3 \times x &= 21 \end{aligned}$$



Վեց-վեց համարեցեք մինչև 96.

✓ Ներքևի քառակուսիների մեջ գրած որինակները կարճ ձևով գրեցեք քառակուսիների տակ.



✓ Հաշվեցեք բանավոր և գրավոր.

$$\begin{aligned} 6 \times 3 &= & 6 \times 8 &= \\ 6 \times 7 &= & 6 \times 5 &= \\ 6 \times 9 &= & 6 \times 6 &= \\ 6 \times 4 &= & 6 \times 10 &= \end{aligned}$$

$$\begin{aligned} 24 + (6 \times 3) &= & 78 - (6 \times 7) &= \\ 32 + (6 \times 7) &= & 93 - (6 \times 9) &= \\ 48 + (6 \times 6) &= & 86 - (6 \times 8) &= \\ 63 + (6 \times 6) &= & 91 - (6 \times 9) &= \end{aligned}$$

✓ 12 լուցկին հավասարապես բաժանեցեք 6 տեղ: Վերջին կլինի ամեն մի տեղում:

✓ Գծագրեցեք 24 քառակուսի 6 շարքով: Քանի քառակուսի կլինի ամեն մի շարքում:

✓ 30 կոպեկը հավասարապես բաժանեցեք 6 աշակերտի: Վերջին կհասնի յուրաքանչյուրին:

✓ Հաշվեցեք բանավոր ու գրավոր.

$$\begin{aligned} 24 : 6 &= & 18 : 6 &= \\ 48 : 6 &= & 36 : 6 &= \\ 30 : 6 &= & 54 : 6 &= \\ 60 : 6 &= & 42 : 6 &= \end{aligned}$$

✓ 6 թերթ թղթից պատրաստում են 1 տետր: Քանի տետր կարելի կլինի պատրաստել՝

$$\begin{aligned} 36 : 6 &= \\ 48 : 6 &= \\ 42 : 6 &= \\ 54 : 6 &= \\ 30 : 6 &= \\ 60 : 6 &= \\ 24 : 6 &= \end{aligned}$$

Հաշվեցեք գրավոր.

$$\begin{aligned} 36 + (48 : 6) &= & 71 - (42 : 6) &= \\ 49 + (24 : 6) &= & 65 - (43 : 6) &= \\ 65 + (54 : 6) &= & 83 - (30 : 6) &= \\ 71 + (42 : 6) &= & 98 - (54 : 6) &= \end{aligned}$$

$$\begin{aligned} 30 : x &= 6 & 24 : x &= 6 \\ 48 : x &= 6 & 42 : x &= 6 \\ 54 : x &= 6 & 36 : x &= 6 \\ 6 \times x &= 30 & 6 \times x &= 36 \\ 6 \times x &= 42 & 6 \times x &= 24 \\ 6 \times x &= 54 & 6 \times x &= 48 \end{aligned}$$

✓ Գրեցեք 1-ից մինչև 60 և գծեցեք այն թվերի տակ, Վորոնք հավասար բաժանվում են 6-ի վրա:

✓ Համարեցեք 9-9 մինչև 99 և ընդհանրացրեք:

✓ Տեսրո՞ւմ գծագրեցեք այսպիսի մի ցանց.

1	2	3	4	5	6	7	8	9
2								
3								
4								
5								
6								
7								
8								
9								
10								

Մի շարքում քանի՞ վանդակ կա:


Քանի՞ վանդակից է բաղկացած 2 շարքը: Գրեցեք այսպես.
 $9 \times 2 = 18$:

Քանի՞ վանդակից է բաղկացած 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10 շարքը: Ի՞նչպես կգրեք այդ:

✓ Վերջան կլինի.

$9 \times 2 =$	$9 \times 6 =$
$9 \times 3 =$	$9 \times 7 =$
$9 \times 4 =$	$9 \times 8 =$
$9 \times 5 =$	$9 \times 9 =$
	$9 \times 10 =$

✓ Մի քառակուսի հաստ թղթի վրա գրեցեք 9 և շարժեցեք հաջորդաբար ներքևի դատարկ քառակուսիների վրայով: Ի՞նչ քան կստանաք:



«ԱՐԳԵԼՎԱՆԻ ԹՎԵՐԻ» ԽԱՂԸ

Տեսրո՞ւմ գրեցեք այն թվերը, Վորոնք ստացվում են 9 անգամ վերնելիս (կամ 9-ով բազմապատկելիս), որինակ 9, 18, 27... : Սրանք ել հանդիսանում են արգելված թվերը և խաղի ժամանակ արտասանել չի կարելի:

Խաղում են այսպես.

Աշակերտները կարգով համարում են՝ 1, 2, 3, 4, 5... : Մինչև 90: Յերբ հերթը հասնում է «արգելված թվերին», խաղացողները պետք է ասեն «չգիտեմ»: Ով սխալմամբ արտասանում է «արգելված թիվը», նա չի համարվում և խաղը տարված:


✓ 18 մատիտը հավասարապես բաշխեցեք 9 նոտարանի: Քանի մատիտ կհասնի ամեն մի նոտարանին:

✓ 27 գրչածալը հավասարապես տվեք 9 աշակերտի: Քանի գրչածալը կհասնի յուրաքանչյուրին:

✓ Հաշվեցեք բանավոր և գրավոր.

$$\begin{array}{ll} 45:9= & 72:9= \\ 63:9= & 27:9= \\ 36:9= & 81:9= \\ 54:9= & 90:9= \end{array}$$

$$\begin{array}{ll} 54+(36:9)= & 27+(27:9)= \\ 73+(72:9)= & 47+(63:9)= \\ 45+(45:9)= & 70+(18:9)= \\ 81+(81:9)= & 82+(54:9)= \end{array}$$



✓ Իմացեք անհայտ թիվը և նշանակեցեք x-ի փոխարեն.

$$\begin{array}{lll} 63:x=9 & 54:x=9 & 45=9 \times x \\ 55:x=9 & 81:x=9 & 72=9 \times x \\ 36:x=9 & 72:x=9 & 54=9 \times x \end{array}$$

✓ Ատամնաբույժը քննեց 92 դպրոցական յերեխաների ատամները. պարզվեց, վոր բոլորովին փչացած ատամներ ունեն 8 աշակերտներ, նրանցից 6 անգամ ավելին, միայն մի փչացած ատամ, իսկ մնացածն՝ առողջ ատամներ: Աշակերտներից քանիսն առողջ ատամներ ունեն:

✓ Ատամներն առողջ և մաքուր պահելու համար բժիշկը պատվիրեց գործածել խոզանակ և ատամի փոշի: Վճրքան ծախս կնոստեր յուրաքանչյուրին, յեթե ատամի փոշու տուփն արժեք 9 կոպեկ, իսկ խոզանակը՝ 6 անգամ ավելի:


✓ Ընտանիքում յերեխաներից մեկը վարակված էր աչքի տրախոմա հիվանդությամբ: Նույն յերեսորբիչը գործածելու պատճառով զանազան ժամանակում վարակվեցին յեղբայրն ել, քույրն ել: Յեղբայրը դպրոցից լեռ ընկավ 54 որ, իսկ քույրը՝ 3 անգամ պակաս: Նրանք քանի որ յետ ընկան դասերից:

✓ Տրախոմա աչքացավով հիվանդը դպրոցում վարակեց 9-ին: Մի տարի հետո այդ հիվանդությամբ վարակվեցին 3 անգամ ավելին, իսկ հետևյալ տարին՝ 5-ով ավելի, քան նախորդ տարին: Աչքացավով հիվանդը քանիսին վարակեց:

✓ Յերեխաները սիրում են քնքշել շներին ու կատուներին. այդ կենդանիներն ել հաճախ լիզում են յերեխաների ձեռքերը, յերեսը, նույնիսկ շրթունքների և վարակում յերիզորդով: Բժիշկը բնակելով 96 յերեխաների, նկատեց, վոր յերիզորդով վարակված են 9 աղջիկ և 3 անգամ ավելի՝ տղաներ: Քննված յերեխաներից քանիսն ելին ազատ մնացել վարակումից:

✓ Քաղաքում նոյեմբեր ամսին քութեշ հիվանդությամբ բռնված էր 9 յերեխա. դեկտեմբերին հիվանդների թիվ մեծացավ 6 անգամ, իսկ հունվարին 45 եր: Վճր ամսին հիվանդների թիվն ամենամեծն էր:

Այս խնդրի թվերն արտահայտեցեք դիագրամով:
Ցանցապատ թղթի մի վանդակով արտահայտեցեք 9 հիվանդ, այդ հաշվով նոյեմբերի 9 հիվանդին կհատկացվի 1 վանդակ, դեկտեմբերի 54 հիվանդին՝ 6 և հունվարի 45 հիվանդին՝ 5 վանդակ, այսպես:



Ասենք, թե նոյեմբերին հիվանդների թիվը 6 էր, դեկտեմբերին՝ 5 անգամ ավելի, իսկ հունվարին 48: Գծագրեցեք դիագրամ, 6 հիվանդին հատկացնելով 1 վանդակ:

✓ 100 դպրոցական յերեխաների բնակարաններից 8-ում ողափոխությունը կատարվում է ոգանցքի, 6 անգամ ավելի՝ յերդիկի և դռան միջոցով: Քանի բնակարանում ողափոխություն չի լինում:

✓ Գյուղում կա 72 ընտանիք և ընդամենը կա 8 արտաքնոց, ընտանիքներից մի մասը գուրկ են հատկապես շինված արտաքնոցից: Քանի անգամ պետք է մեծացնել արտաքնոցների թիվը, վոր ամեն մի ընտանիք ունենա իր սեփականը:


✓ Լուցկիները դասավորեցե՛ք լոթ-լոթ և համարեցե՛ք մինչև 98 և ընդհակառակը:

✓ Գրեցե՛ք և հաշվեցե՛ք.

$$\begin{array}{ll} 36 + (7 \times 6) = & 53 - (7 \times 7) = \\ 27 + (7 \times 4) = & 46 - (7 \times 4) = \\ 54 + (7 \times 3) = & 95 - (7 \times 8) = \\ 28 + (7 \times 9) = & 82 - (7 \times 9) = \end{array}$$

✓ Հաստ թղթից պատրաստեցե՛ք այսպիսի մի քարտ — 7, վորը շարժեցե՛ք ներքևի դատարկ քառակուսիների վրայով և հաշվեցե՛ք.

 $\times 6$	 $\times 4$	 $2 \times$
 $\times 3$	 $\times 8$	 $\times 10$
 $\times 7$	 $\times 5$	 $\times 9$



✓ Քանի վանդակ է գծագրած: Քանի հատվածի լե բաժանված: Ամեն մի հատվածը քանի վանդակ է:

✓ Քանոնի վրա ցույց տվե՛ք 21 սանտիմետր. բաժանեցե՛ք դա 7 հավասար մասի: Վնդրան կլինի ամեն մի մասը:

✓ Գրե՛ք 28 թերթերը բաժանեցե՛ք 7 հավասար մասի: Քանի թերթ կլինի ամեն մի մասը:

✓ Հաշվեցե՛ք բանավոր ու գրավոր.

$$\begin{array}{ll} 21 : 7 = & 28 : 7 = \\ 35 : 7 = & 63 : 7 = \\ 56 : 7 = & 42 : 7 = \\ 70 : 7 = & 49 : 7 = \end{array}$$

$$\begin{array}{ll} 32 + (63 : 7) = & 65 - (56 : 7) = \\ 37 + (56 : 7) = & 73 - (21 : 7) = \\ 45 + (28 : 7) = & 88 - (42 : 7) = \\ 90 + (35 : 7) = & 69 - (35 : 7) = \end{array}$$

✓ Իմացե՛ք անհայտ թիվը և գրեցե՛ք x-ի փոխարեն.

$$\begin{array}{lll} 35 : x = 7 & 28 : x = 7 & 42 = 7 \times x \\ 49 : x = 7 & 56 : x = 7 & 63 = 7 \times x \\ 63 : x = 7 & 21 : x = 7 & 49 = 7 \times x \\ 42 : x = 7 & 70 : x = 7 & 56 = 7 \times x \end{array}$$

ԼՈՏՈՅԻ ԽԱՂ


Ներքևի որինակով պատրաստեցե՛ք լոտո և խաղացե՛ք.

$56 : 6 + 38$	$5 \times 8 - 5$	$49 : 7 + 35$	$36 : 4 + 12$	$6 \times 9 - 14$	$9 \times 8 - 12$
$81 : 9 + 16$	$9 \times 5 - 30$	$72 : 9 + 20$	$65 : 7 + 61$	$6 \times 8 - 29$	$35 : 7 + 68$
$48 : 8 + 40$	$49 : 7 + 48$	$56 : 7 + 29$	$9 \times 6 - 28$	$72 : 9 - 7$	$64 : 8 + 10$
$72 : 8 + 62$	$9 \times 7 + 18$	$8 \times 7 + 18$	$36 : 4 + 20$	$42 : 6 + 13$	$48 : 8 + 69$

26	46	38
47	81	37
29	18	1
71	19	55

42	28	21
15	70	20
75	60	40
73	25	35

ԲԱՐԴ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԹՎԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄՆ ՈՒ ՀԱՆՈՒՄԸ



✓ Ի՞նչ էք տեսնում:

✓ Չափեցե՛ք ձեր խմբի աշակերտների հասակը և նշանակեցե՛ք յուրաքանչյուրի անվան գիմաց:

Տղաներից

Ռուբենի հասակը	1 մետր	24 սանտիմետր է.
Լևոնի	» 1 »	18 »
Ռաֆֆիկի	» 1 »	21 »
Արզարի	» 1 »	16 »

Աղջիկներից

Լուսիկի հասակը	1 մետր	23 սանտիմետր է.
Սեդայի	» 1 »	28 »
Նելլի	» 1 »	20 »
Մազգալի	» 1 »	26 »

✓ Համեմատեցե՛ք Ռուբենի և Սեդայի հասակը:

Սեդայի հասակը	1 մետր	28 սանտիմետր է
Ռուբենի	» 1 »	24 »

» 4 սանտիմետր

Ռուբեն, Սեդայի հասակը 4 սանտիմետրով ավելի լք Ռուբենից:

✓ Համեմատեցե՛ք.

- 1) Լևոնի և Մազգալի
- 2) Արզարի և Լուսիկի
- 3) Ռաֆֆիկի և Նելլի հասակը:

✓ Անցյալ տարի Լիպարիտի հասակը 1 մետր 26 սանտիմետր էր, իսկ այս տարի 5 սանտիմետրով ավելացել է: Այժմ վճրքան է Լիպարիտի հասակը:

$$\begin{array}{r} 1 \text{ մետր } 26 \text{ սանտիմետր} \\ + \quad \quad \quad 5 \quad \quad \quad \text{»} \\ \hline 1 \text{ մետր } 31 \text{ սանտիմետր} \end{array}$$

✓ Չափեցե՛ք ձեր խմբի ամենաբարձ և ամենացածր աշակերտների հասակը և վորոշեցե՛ք տարբերությունը:

Մետրը կրճատ գրում են—մ.


Սանտիմետրը » » —սմ.

✓ Ի՞րար տակ գրեցե՛ք և հաշվեցե՛ք.

$$\begin{array}{l} 4 \text{ մ. } 7 \text{ սմ.} + 1 \text{ մ. } 2 \text{ սմ.} \\ 3 \text{ մ. } 5 \text{ սմ.} + 4 \text{ մ. } 3 \text{ սմ.} \end{array}$$

Տաս սանտիմետրը 1 դեցիմետր է: Մետրական քանոնի վրա ցույց տվե՛ք 1 դեցիմետր:

Այս դեցիմետրի լերկարությունը.



✓ Մի մետրը քանի՞ դեցիմետր է:
Դեցիմետրը կրճատ գրվում է այսպես — դմ.

✓ Հաշվեցե՛ք՝ ի՞րար տակ գրելով.

$$\begin{array}{l} 1 \text{ դմ. } 7 \text{ սմ.} + 3 \text{ դմ. } 5 \text{ սմ.} \\ 6 \text{ դմ. } 5 \text{ սմ.} + 8 \text{ դմ. } 7 \text{ սմ.} \\ 14 \text{ մ. } 6 \text{ դմ.} + 25 \text{ մ. } 7 \text{ դմ.} \\ 18 \text{ մ. } 9 \text{ դմ.} + 3 \text{ մ. } 8 \text{ դմ.} \end{array}$$

✓ Հատակին դժեցեք մի գիծ 1 մետր 6 սանտիմետր լերկա-
բության: Ջնշեցեք 4 սանտիմետրը: վճրքան մնաց:

✓ Գրեցեք իրար տակ և հաշվեցեք.

2 մ. 6 սմ. — 1 մ. 4 սմ.

8 մ. 9 սմ. — 2 մ. 3 սմ.

7 դմ. 8 սմ. — 5 դմ. 4 սմ.

6 դմ. 6 սմ. — 2 դմ. 8 սմ.

4 մ. 7 դմ. — 4 դմ.

16 մ. 6 դմ. — 12 մ. 8 դմ.



Ի՞նչ եք տեսնում այս նկարում:

✓ Չափեցեք ձեր խմբի աշակերտների բաշը և նշանակեցեք:

Սիմոնի բաշը 15 կիլոգրամ 50 գրամ է

Սահակի » 16 » 40 »

Նազիկի » 16 » 20 »

Մարգոյի » 18 » 60 »

✓ Համեմատեցեք Սիմոնի և Նազիկի, Սահակի ու Մարգոյի
բաշը: Ով վճրքանով ավելի ծանր է սյուսից:

Կիլոգրամ կրճատ գրում են — կգ.

Գրամ » » — գ.

✓ Գրեցեք իրար տակ և հաշվեցեք.

27 կգ. 40 գ. + 8 կգ. 50 գ.

14 կգ. 60 գ. + 7 կգ. 40 գ.

19 կգ. 36 գ. + 2 կգ. 55 գ.

✓ Դարոցական դեղատան համար գնեցին մի պահարան, վորին
վճարեցին 35 ուրլի 45 կոպեկ, իսկ դեղերին և այլ բժշկական նյու-
թերին՝ 27 ուրլի 38 կոպեկ: Վճրքան ծախս լեղավ դեղատան համար:

✓ Գրեցեք իրար տակ և հաշվեցեք.

25 ո. 18 կ. + 7 ո. 53 կ.

66 ո. 65 կ. + 6 ո. 27 կ.

36 ո. 29 կ. + 18 ո. 42 կ.

✓ Գրեցեք իրար տակ և հաշվեցեք.

26 ո. 83 կ. — 15 ո. 76 կ.

54 ո. 45 կ. — 16 ո. 18 կ.

63 ո. 78 կ. — 27 ո. 57 կ.

✓ Համեմատեցեք 1 ուրլին և 10 կոպեկը: Քանի՞ անգամ 1
ուրլին մեծ է 10 կոպեկից:

Քանի՞ անգամ 10 կոպեկը փոքր է 1 ուրլուց:

10 կոպեկը ուրլու վճր մասն է:


✓ Նայեցեք մետրական քանոնին և առացեք՝ 1 դեցիմետրը
